ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

N 89
25 օգոստոս 2015թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Կոտայքի մարզի Հացավան համայնքի 01.09.2014թ.-01.09.2015թ.համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ.-01.09.2015թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայքնի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Շ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՑԱՎԱՆ 2015թ.

Հարգելի Հացավանցիներ 2014 թվականի երկրորդ և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայքնի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թվականի դեկտեմբերի 27-ին համայնքի ավագանին իր N 37-Ն որոշմամբ ընդունել է 2014 թվականի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 11մլն.135 հազար դրամ,ծախսերը՝13մլն.858 հազար դրամ: Պակասորդը կազմել է 2մլն.791 հազար 900 դրամ:Հողի հարկի չափը Հացավանի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 1մլն.500 հազար դրամ:2014թ.հողի հարկը հավաքագրվել է 1մլն.500 հազար 400 դրամ,որը կազմում է տարեկան պլանի 100.03%-ը:
2014թվականի գույքային հարկերը հավաքագրվել են 100%-ով,որը ձացարձակ թվով կազմել է 1մլն.955 հազար դրամ:
2014թվականի դեկտեմբերի 23-ին համայքնի ավագանին իր N 36-Ն որոշմամբ ընդունել է 2015թվականի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 12մլն.716 հազար 300 դրամ,ծախսերը 6մլն.764 հազար 204 դրամ:
Հողի հարկը կազմել է 1մլն.500 հազար դրամ,որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 556 հազար դրամ,որը կազմում է տարեկան պլանի 37,1%-ը:
Գույքային հարկերը կազմել են 11մլն.216 հազար 300 հարյուր դրամ,որից առաջին կիսամյակում հավաքագրվել է 5մլն.617 հազար 200 դրամ,որը կազմում է տարեկան պլանի 199,6%-ը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 380.0 հազար դրամի օգնություն:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի,հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գտնվող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 3 թույլտվություններ,որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ընթացքի մեջ է գտնվում համայքնի ներտնտեսային ոռոգման ցանցի կառուցումը:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015 թվականի մայիսի 11-ին կայացել է Հացավան համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալություն,որի արդյունքում վարձակալությամբ է տրվել 10.50255 հա այլ հողատեսք: